CPT/Inf (2010) 8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ

2008 թվականի մարտի 15-17-ը Հայաստանի Հանրապետություն կատարած այցելության արդյունքում Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) կողմից ներկայացված զեկույցի կապակցությամբ

Հայաստանի կառավարությունը խնդրել է հրապարակել սույն պատասխանը: 2008թ.-ի մարտին Հայաստան կատարած այցելության վերաբերյալ CPT-ի զեկույցը զետեղված է CPT/Inf (2010) 7 փաստաթղթում:

Ստրասբուրգ, 19 մարտի, 2010թ.

Նշում՝

Համաձայն Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 3 պարբերության՝ որոշ անուններ հանվել են:

2008 թվականի մարտի 15-17-ը Հայաստանի Հանրապետություն կատարած այցելության արդյունքում Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի կողմից ներկայացված զեկույցի (այսուհետ՝ Զեկույց) վերաբերյալ բերվում են Հայաստանի Հանրապետության կառավարության ներքոհիշյալ նկատառումները՝ ըստ ոլորտների:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության իրավասության տակ գտնվող հաստատություններ

Զեկույցի 14-րդ պարագրաֆի 2-րդ պարբերության վերաբերյալ.

«Ա»-ն սույն թվականի մարտի 4-ին ծանուցագրով հրավիրվել է ոստիկանության Մարաշի բաժանմունք, որտեղ նա ընդունել է իր՝ քաղաքապետարանին հարող տարածքում լինելու և մարտի 1-ի զանգվածային անկարգություններին մասնակցելու փաստը: Բաժանմունքում մի քանի րոպե պահելուց հետո «Ա»-ն տեղափոխվել է ոստիկանության Կենտրոնականի բաժին, այնտեղից էլ Հատուկ քննչական ծառայություն, որտեղ և կալանավորվել է:

Ոստիկանության նշված տարածքային ստորաբաժանումներում որևիցե մեկի կողմից «Ա»-ի նկատմամբ բռնություններ չի գործադրվել, հայհոյանքներ չի տրվել և անօրինական գործողություններ չեն կատարվել:

Ինչ վերաբերում է ոստիկանի կողմից «Ա»-ի հանդեպ իբր բռնություն գործադրելուն, մասնավորապես աջ աչքի հատվածում հարված հասցնելուն, ապա միևնույն հարցով ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ՀՀ ոստիկանության պետին ուղղված գրության կապակցությամբ անցկացված ստուգումներով հիմնավորվել է, որ քաղաքացի «Ա»-ն, ում նկատմամբ ՀՀ քրեական օրենգրքի 225 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված քրեական գործն ուղարկվել է դատարան, հայտարարել է, որ աջ հոնքի վրա առկա վնասվածքը ստացել է Երևանի քաղաքապետարանի մոտ՝ նախքան ոստիկանություն հրավիրվելը, ինչն անձամբ հավաստել է իր ստորագրությամբ ձերբակալվածներին պահելու վայր տեղափոխվելու վերաբերյալ կազմված արձանագրությունում:

Զեկույցի 15-րդ պարագրաֆի վերաբերյալ.

Հետընտրական իրադարձությունների հետ կապված ձերբակալված անձանցից, նրանց պաշտպաններից և/կամ օրինական ներկայացուցիչներից 2008թ. ութ ամիսների ընթացքում ՀՀ ոստիկանությունում ոչ մի դիմում չի ստացվել՝ կապված ոստիկանների կողմից ձերբակալվածներին խոշտանգելու, ծեծի ենթարկելու կամ արժանապատվությունը նվաստացնող գործողություններ կատարելու հետ:

Զեկույցի 16-րդ պարագրաֆի վերաբերյալ.

Ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի ենթարկվելու մասին դիմում-բողոքների գրանցման կենտրոնացված համակարգի աշխատելու վերաբերյալ հայտնում ենք, որ ՀՀ ոստիկանության պետի 05.06.2007 թվականի թիվ 5-Ց ցուցումով ոստիկանությունում կատարվում է ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց ծեծի, բռնության կամ խոշտանգումների ենթարկելու փաստերով ոստիկանության ծառայողների վերաբերյալ կատարված ծառայողական քննության արդյունքների կենտրոնացված հաշվառում:

Զեկույցի 18-րդ պարագրաֆի 4-րդ պարբերության վերաբերյալ.

2008 թվականի մարտի 1-ի գործողության ժամանակ ՀՀ ոստիկանությունը, մասնավորապես, ոստիկանության զորքերն օգտագործել են հետևյալ հատուկ միջոցները՝ ռետինե մահակներ, արցունքաբեր գազ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ, ջրանետեր, ինչպես նաև ռետինե գնդակով փամփուշտներ: Ընդհանուր առմամբ օգտագործվել է 191 հատ ռետինե գնդակով փամփուշտ:

Ռետինե գնդակով փամփուշտներ կրակող հրազենները համարվում են ակտիվ պաշտպանության հատուկ միջոցներ: Դրանք են՝ «КС-23» հատուկ հրացանը և «Կոռնետ» տեսակի ատրճանակը:

Ինչ վերաբերում է Հայաստանում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ռետինե գնդակներ օգտագործելու հետ կապված ստացված հրահանգներին և կազմակերպված ուսուցմանը, տեղեկացնենք, որ ՄԱԿ-ի Իրավախախտների հետ վարվելու և հանցավորության կանխարգելման 8-րդ կոնգրեսում ընդունված «Իրավակարգի պահպանման ուղղությամբ պաշտոնատար անձանց կողմից ուժի և հրազենի կիրառման

հիմնարար սկզբունքների» հավելվածի ընդհանուր դրույթների 2-րդ կետում նշված է, որ կառավարությունները և իրավապահ մարմինները մշակում են միջոցների հնարավորինս լայն զինանոց և իրավակարգի պահպանմամբ զբաղվող պաշտոնատար անձանց ապահովում զենքի և ռազմամթերքի տարատեսակներով, որոնք հնարավորություն կտան տարանջատված կիրառել ուժ և հրազեն: Դրանց թվին են դասվում մահ չառաջացնող, բայց վնասազերծող զենքի տեսակների նախագծում, որոնք կկիրառվեն համապատասխան իրավիճակներում, նպատակ ունենալով առավել նեղացնել այն միջոցների օգտագործման ոլորտը, որոնք կարող են վիրավորել կամ մահ առաջացնել:

Վերը նշված դրույթներից ելնելով՝ ոստիկանությունը նպատակահարմար է գտել ոստիկանության զորքերի շարքերի վրա հարձակում գործող զինված իրավախախտների հանդեպ կիրառել ռետինե գնդակով փամփուշտներ: Ի դեպ, ՀՀ ոստիկանությունում եղած տեղեկատվության համաձայն, ս.թ. մարտի 1-2-ի դեպքերով արձակված ռետինե գնդակով փամփուշտները զոհերից ոչ մեկի մահվան պատճառ չեն հանդիսացել:

Նշված ակտիվ պաշտպանության հատուկ միջոցներ օգտագործելու կարգի ուսուցանումը ներկայումս իրականացվում է ոստիկանության զորքերի ստորաբաժանումներում, և ս.թ. մարտի 1-ին դրանք հատկացվել են ոստիկանության զորքերի առավել փորձառու ծառայողներին:

<u>Զեկույցի 21-րդ պարագրաֆի 6-րդ պարբերության վերաբերյալ.</u>

Մարտիմեկյան իրադարձությունների ուսումնասիրությունների արդյունքները, կատարվածի իրավական գնահատականները կարող են տրվել միայն ս.թ. մարտի 1-2-ի դեպքերով հարուցված քրեական գործի քննության ավարտից հետո:

<u>Զեկույցի 25-րդ պարագրաֆի 2-րդ պարբերության վերաբերյալ.</u>

Դատաբժշկական քննություն անցկացնելու մասին պահանջը անմիջականորեն ձերբակալված անձանց կողմից ներկայացվելու հնարավորության մասին հայտնում ենք, որ հարցի ամբողջական կարգավորումը տրված է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում, որտեղ 3-րդ պարբերությունում նշված է, որ «Ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանը իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն»:

Զեկույցի 27-րդ պարագրաֆի վերաբերյալ.

2008 թվականի մարտի 3-ին Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցներին, ձերբակալված անձանց տեսակցելու նպատակով, ոստիկանության բաժիններ կատարած այցերը խոչընդոտելու վերաբերյալ տեղեկություններ ՀՀ ոստիկանությունում չեն ստացվել:

ՀՀ ոստիկանությունում ուսումնասիրվել և քննարկվել են զեկույցում առաջ քաշված առաջարկությունները, դիտողությունները և մտահոգությունները: Հավաստիացնում ենք, որ դրանք պատշաճ ուշադրության են արժանացել, ընդունվել ի գիտություն և, որ առաջիկայում, շարունակելով ոլորտում որդեգրած բարեփոխումների գործընթացը, ՀՀ ոստիկանությունն իր հետագա գործունեության ընթացքում հաշվի կառնի դրանք:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավասության տակ գտնվող հաստատություններ

Զեկույցի 24-րդ պարագրաֆի վերաբերյալ

Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ ստեղծված աշխատանքային խումբը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Ամերիկյան իրավաբանների ընկերակցության աջակցությամբ իրականացնում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի բարեփոխման աշխատանքները և CPT-ի կողմից բարձրացված հարցերը՝ կապված իրավաբանական օգնության տրամադրումն իրապես արդյունավետ դարձնելու հետ, ևս կքննարկվեն օրենքի լրամշակման աշխատանքների ընթացքում:

Զեկույցի 30-րդ պարագրաֆի վերաբերյալ.

Ինչ վերաբերում է ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող անձանց ամենօրյա բացօթյա վարժանքներին, ապա պետք է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական

ծառայության՝ կալանավորված անձանց և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգի 55-րդ կետի համաձայն՝ պատիժը կատարող հիմնարկի պետի կողմից հաստատված օրվա կարգացուցակով օրական 1 ժամ տևողությամբ նախատեսվում է զբոսանք, որից 15 րոպե մարմնամարզություն: Հարկ է նշել, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեակատարողական հիմնարկներում կարող են ստեղծվել դատապարտյալների մշակութային, լուսավորչական, կրոնական և մարզական միավորումներ: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը կազմակերպում է սպորտային միջոցառումներ, մասնավորապես թենիսի, ֆուտբոլի, շախմատի և այլ մրցաշարեր անազատության մեջ պահվող անձանց ակտիվ գործունեությունը զարգացնելու ուղղությամբ:

Քրեակատարողական վարչությունը միջոցներ է ձեռնարկում ինչպես ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն», այնպես էլ մյուս քրեակատարողական հիմնարկների խցերի և լոգարանների բարելավման և վարժությունների կատարման տարածքի ընդարձակման ուղղությամբ:

<u>Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության իրավասության տակ գտնվող հաստատություններ</u>

<u>Զեկույցի 18-րդ պարագրաֆի 4-րդ պարբերության վերաբերյալ.</u>

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ստորաբաժանումները մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ հասարակական կարգի պահպանության հետ կապված գործողություններ չեն իրականացրել և «հատուկ միջոցներ» չեն գործածել: Հարկ ենք համարում նշել նաև, որ ՀՀ ԱԱԾ ստորաբաժանումների անձնակազմն իր աշխատանքային գործառույթներն իրականացնելիս, մշտապես պատշաճ կատարել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված և միջազգային պայմանագրերով ՀՀ ստանձնած պարտավորություններից բխող պահանջները:

<u>Զեկույցի 23-րդ, 24-րդ և 25-րդ պարագրաֆների վերաբերյալ.</u>

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից անձի ձերբակալելուց հետո, նշված գործողությունը կատարած աշխատակիցները միշտ էլ ձեռնարկել և իրականացրել են համապատասխան միջոցներ՝ այդ

փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով 12 ժամվա ընթացքում նրա հարազատներին տեղեկացնելու մասին, կազմելով համապատասխան արձանագրություն, որը կցվել է քրեական գործի նյութերին:

Ապահովվել է ձերբակալված անձանց պաշտպանության, նրանց նկատմամբ դատաբժշկական կամ այլ փորձաքննություններ իրականացնելու իրավունքը: Նման դեպքերում կազմվել են համապատասխան արձանագրություններ, որոնք կցվել են քրեական գործի նյութերին:

Ձերբակալվածներին բժշկական օգնություն ստանալու և նրանց մյուս իրավունքները, մասնավորապես նաև պաշտպան ունենալու գործընթացն ապահովելը ՀՀ Ազգային անվտանգության ծառայության պաշտոնյաների կողմից անշեղորեն իրականացվել է:

<u>Զեկույցի 28-րդ պարագրաֆի 2-րդ պարբերության վերաբերյալ.</u>

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը հաշվի կառնի ԱԱԾ Երևան քաղաքի ժամանակավոր մեկուսարանի 7 քառ.մ. խուցը որպես մեկտեղանոց օգտագործելու CPT-ի առաջարկությունը:

<u>Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության իրավասության տակ գտնվող հաստատություններ</u>

<u>Զեկույցի 11-րդ պարագրաֆի վերաբերյալ.</u>

2008 թվականի մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված քրեական գործով առանձին դեպքերում ձերբակալված անձանց ձերբակալվածներին պահելու վայրերում 72 ժամից ավելի պահելու և կալանավորվածներին պահելու վայր ուշ տեղափոխելու վերաբերյալ հայտնենք, որ ՀՀ քրական դատավարության օրենսդրությամբ սահմանված ձերբակալման ժամկետները չեն խախտվել: Ձերբակալված անձանց նկատմամբ օրենքով սահմանված ժամկետներում համապատասխան դատարանների որոշումներով կիրառվել է կալանավորում կամ կալանավորման հետ չկապված այլ խափանման միջոց:

Հնարավոր է եղած լինեն դեպքեր, երբ դատարանի կողմից կալանավորումը կիրառելուց հետո անձը պահվել է ՁՊՎ-ում, որը պայմանավորված է անհրաժեշտ, անհետաձգելի քննչական գործողությունների կատարման և մեկուսարան ընդունելու համար

պահանջվող փաստաթղթերի ստացման, նախապատրաստման հետ, ինչպես նաև զուտ տեխնիկական այլ պատճառներով:

Այդուհանդերձ, դիտողությունն ընդունվել է ի գիտություն և այդ կապակցությամբ կատարվել են համապատասխան հրահանգավորումներ:

<u>Զեկույցի 12-րդ, 13-րդ և 14-րդ պարագրաֆների վերաբերյալ.</u>

Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ձերբակալվածների նկատմամբ խոշտանգումների, ֆիզիկական վատ վերաբերմունքի մասին տվյալներ են արձանագրվել, որոնք նույնպես կրում են ընդհանրական բնույթ, արձանագրված չեն և նշված չեն բռնության տեղը կամ աստիճանը: Քննությամբ պարզվել է, որ կալանավորված անձինք արձանագրված վնասվածքներն ստացել են զանգվածային անկարգություններին մասնակցելու հետևանքով և ընթացքում:

Նախաքննության ընթացքում քննությանը խորթ, արժանապատվությունը նվաստացնող մեթոդներ չեն կիրառվել:

Նախաքննության ընթացքում առանձին մեղադրյալներ, կասկածյալներ անձամբ կամ իրենց պաշտպանների միջոցով դիմումներ են ներկայացրել՝ ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց նկատմամբ բռնություններ կիրառելու մասին, որոնց կապակցությամբ կատարվել է պատշաճ քննություն, անհրաժեշտության դեպքում նշանակվել են փորձաքննություններ, սակայն ոստիկանության կոնկրետ աշխատակցի կողմից բռնություն կիրառելու փաստեր չեն հաստատվել:

Զեկույցի 13-րդ կետում հիշատակված «Ա»-ի վերաբերյալ կատարվել է անհրաժեշտ քննություն, որի արդյունքների մասին իրազեկվել է նաև հանրությունը:

Կատարված նախաքննությամբ ձեռք բերված բազմաթիվ ապացույցներով, այդ թվում մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձություններն արտացոլող տեսագրություններով, հաստատվել է, որ «Ա»-ն մասնակցել է ՀՀ ոստիկանության Գուգարքի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի պետին ծեծի ենթարկելուն:

«Ա»-ն ցուցմունք է տվել, որ 2008 թվականի մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի մոտ հայտնվել է պատահաբար: Այնուհետև հրաժարվել է ցուցմունքներ տալուց: Փոխարենը նրա շահերի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել այն մասին, թե իր պաշտպանյալը հայտարարել է, որ քաղաքացիական հագուստով անձինք իրեն ծեծի են ենթարկել, որի մասին հրապարակում է եղել նաև ընդդիմադիր թերթերում:

Այդ կապակցությամբ անմիջապես նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, կատարվել է քննություն և պարզվել է, որ կասկածյալ «Ա»-ն ձերբակալվածների պահման վայր ընդունվելիս հայտարարել է, որ աջ հոնքի վրա առկա քերծվածքն ստացել է Երևանի քաղաքապետարանի մոտ՝ մինչ բերման ենթարկվելը: Ընդ որում, վնասվածքի առկայության վերաբերյալ ձեբակալվածներին պահելու վայրի աշխատակիցների կազմած արձանագրությունը, դրա մասին իրազեկումը նա հաստատել է իր ստորագրությամբ:

Դատաբժշկական փորձագետի եզրակացության համաձայն՝ «Ա»-ի աջ աչքի վերին կոպի վերքն առողջության թեթև վնասի հատկանիշներ չի պարունակում:

Հատկանշական է, որ «Ա»-ն միայն դատաքննության ավարտական փուլում՝ ձերբակալվելուց հինգ ամիս անց «մտաբերել» և հայտարարել է, թե ովքեր են իրեն «ենթադրյալ» ծեծողները:

Բռնությունների և քննության ընթացքում կիրառված խորթ մեթոդների վերաբերյալ հայտարարությունները հիմնականում նպատակ են հետապնդում անձին կամ նրա մերձավորին զերծ պահել պատասխանատվությունից:

Մեկ այլ օրինակ՝

«Բ»-ի վերաբերյալ քրեական գործի դատաքննության ժամանակ վկա «Գ»-ն ՀՀ Նախագահին, ՀՀ գլխավոր դատախազին և այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց 2008 թվականի հուլիսի 12-ին հասցեագրված դիմումում հայտնել է, որ 2008 թվականի մարտի 2-ին բերման ենթարկվելիս և դրանից հետո, ինչպես նաև բացատրություն և ցուցմունք տալու ընթացքում իր նկատմամբ բռնություն է գործադրվել, որի ազդեցության տակ իրենից ցուցմունքներ են կորզել: Սակայն դիմումների շուրջ հարցաքննվելիս «Գ»-ն տվել է իրարամերժ ցուցմունքներ՝ հայտնելով, որ ոչ բացատրություն և ոչ էլ ցուցմունք տալու ժամանակ իր նկատմամբ բռնություն չի գործադրվել, ուղղակի դրանք գրել է ոստիկանության աշխատակիցների թելադրանքով, քանի որ բերման ենթարկվելիս իրեն ծեծի են ենթարկել:

Նշված փաստերը ստուգելու նպատակով հարցաքննվել են նաև «Գ»-ին բերման ենթարկած՝ ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության աշխատակիցներ «Դ»-ն և «Ե»-ն, ինչպես նաև «Գ»-ին հարցաքննած՝ քննչական խմբի քննիչ «Զ»-ն, որոնք հերքել են նրա նկատմամբ բռնություն կիրառելու փաստը, ինչպես նաև նրանից որևէ ապօրինի եղանակով բացատրություն և ցուցմունք վերցնելու հանգամանքը, ինչը պնդել են նաև առերես հարցաքննության ժամանակ:

Նույն գործով վկա «Է»-ն դատաքննության ընթացքում, հրաժարվելով իր նախաքննական ցուցմունքներից, հայտարարել է, որ երբևէ չի հարցաքննվել և ցուցմունքներ չի տվել, իսկ քրեական գործում առկա՝ իր անվամբ գրված ցուցմունքներում եղած ձեռագիրն

իրեն չի պատկանում: Մեղադրողի միջնորդության հիման վրա դատարանի կողմից նշանակված դատաձեռագրաբանական փորձաքննությամբ պարզվել է, որ փորձաքննությանը տրամադրված 20.05.2008թ. և 10.06.2008թ. հարցաքննության արձանագրություններում ձեռագիր գրառումները և «Է»-ի բոլոր ստորագրությունները կատարվել են վերջինիս կողմից:

Դրան հակառակ արձանագրվել են շահագրգիռ անձանց կողմից վկաների նկատմամբ ներազդելու դեպքեր:

Նախաքննության ընթացքում մի քանի անգամ փորձեր են արվել վկա «Ը»-ի վրա ապօրինի ներազդեցության միջոցով ստիպել հրաժարվել նախաքննական ցուցմունքներից, որի պատճառով դատարանը նրա նկատմամբ կիրառել է պաշտպանության միջոցներ:

<u>Զեկույցի 15-րդ պարագրաֆի 3-րդ պարբերության և 21-րդ պարագրաֆի վերջին պարբերության վերաբերյալ.</u>

Զեկույցի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներում գտնվող մարտի 1-ի անկարգությունների հետ կապված կալանավորված անձանցից դիմում-բողոք չի ստացվել ՀՀ գլխավոր դատախազությունում՝ ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց նկատմամբ բռնություն գործադրելու վերաբերյալ: Բացի այդ, 2008 թվականի մարտի 1-ին տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ նախաքննությունը դեռևս շարունակվում է, որի ընթացքում քննության առարկա է նաև ոստիկանության աշխատակիցների գործողությունները, դրանց իրավաչափությունը:

Լրիվ, բազմակողմանի քննության արդյունքների հիման վրա պարտադիր իրավական գնահատական կտրվի նրանց գործողություններին, որի համար հաշվի կառնվի և կընդունվի ի գիտություն նաև Զեկույցում ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:

<u>Զեկույցի 23-րդ պարագրաֆի վերաբերյալ.</u>

Նախաքննության ընթացքում ձերբակալված բոլոր անձինք էլ ձերբակալման պահից տեղեկացվել են ինչպես ձերբակալման պատճառի, այնպես էլ իրենց իրավունքների մասին, որի մասին նշվել է արձանագրությունում և որին հետևել է հարցաքննությունը որպես կասկածյալ: Բացի այդ, կալանավորված անձանց անձնական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական

հիմնարկների վարչակազմերը գրությամբ հայտնել են քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց ծնողներին կամ մոտիկ հարազատներին կալանավորի գտնվելու վայրի մասին:

Զեկույցի 24-րդ պարագրաֆի վերաբերյալ.

Ազատությունից զրկված անձանց՝ փաստաբանի օգնությունից արդյունավետ օգտվելու իրավունքի ապահովման վերաբերյալ հայտնում ենք, որ որևէ մեկի՝ պաշտպան ունենալու իրավունքները չեն խախտվել և պաշտպանի ներգրավման հետ կապված խնդիրներ չեն եղել:

Զեկույցի 25-րդ պարագրաֆի 2-րդ պարբերության վերաբերյալ.

Դատաբժշկական հետազոտության պահանջի և հետազոտության արդյունքները տրամադրելու վերաբերյալ նախաքննության մարմինը բացառում է այնպիսի դեպքեր, երբ դատական բժշկի կողմից հետազոտված անձին տրամադրված չլինեն հետազոտության արդյունքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով մեղադրյալները և տուժողները, ինչպես նաև նրանց պաշտպաններն ու ներկայացուցիչները ծանոթացվում են փորձաքննությունների եզրակացություններին: Նույնիսկ, եթե առանձին դեպքերում ժամանակին փորձաքննության եզրակացությունները տրամադրված չլինեն հետազոտված անձին, ապա քրեական գործի նախաքննության ավարտման պահին վերջիններիս և նրանց պաշտպաններին են տրամադրվել քրեական գործի բոլոր փաստաթղթերը, որոնց թվում նաև՝ հիշատակված եզրակացությունները, այսինքն, ազատազրկված անձինք ամեն դեպքում չէին կարող ստացած և ծանոթացած չլինել դատաբժշկական փորձաքննությունների եզրակացություններին:

Ինչ վերաբերում է դատաբժշկական հետազոտության ենթարկվելու նոր պահանջ ներկայացնելու իրավունքին, ապա ազատազրկված անձինք դեռևս նախաքննության փուլում պատշաճ կարգով իրազեկված են եղել իրենց իրավունքների, այդ թվում՝ նաև փորձաքննություններ նշանակելու միջնորդություններ ներկայացնելու իրավունքի մասին:

Ինչպես ազատազրկված անձինք, այնպես էլ ցանկացած այլ քաղաքացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բավարար հիմնավորումներ ներկայացնելու դեպքում

կարող է հանդես գալ փորձաքննություն նշանակելու և դրա առնչությամբ պատշաճ քննություն կատարելու միջնորդությամբ:

Զեկույցի 27-րդ պարագրաֆի վերաբերյալ.

Զեկույցի վերոհիշյալ կետի վերաբերյալ ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի կողմից թույլ չի տրվել կալանավորված անձանց հետ տեսակցություն ունենալ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցներին և մոնիտորինգային խմբի անդամներին, քանի որ քրեական գործի վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ որոշմամբ արգելված է եղել տեսակցությունների տրամադրումը և նրանք նախաքննական մարմնից նախապես չեն ստացել տեսակցելու համաձայնություն: Հետագայում այդ արգելքը հանվել է և վերը նշված անձանց թույլատրվել է տեսակցություն ունենալ: